ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ԼՈՅՍԻ ԵՒ ՍՏՈՒԵՐԻ ՅԱՒԵՐԺԱԿԱՆ ՇՐՋԱՊՏՈՅՏՈՒՄ

Վովա Արզումանեանի «Ճաքած պատերի լուսանցքից» (Երեւան, «Ղիշա» հրատ., 2022.-156 էջ) գիրքը պատմուածքների, էսսէների եւ բանաստեղծութիւնների ժողովածոյ է։ Գիրքը երիտասարդ բանաստեղծի, երկրի եւ հարազատ ժողովրդի հոգսերով մտահոգ անհատի, ազնիւ հայրենասէրի մտորումների խտացումն է։ Ժողովածոն բացւում է «Առաջին Ամանորը» էսսէ-խորհրդածութեամբ։

2020թ. Սեպտեմբերի 27-ին Ատրպէյճանի կողմից Արցախի դէմ սանձազերծուած ագրեսիայի շարունակութիւնը, պատերազմից յետոյ ստեղծուած հոգեկան ծանր ապրումները, ֆիզիքական, սոցիալ-տնտեսական դժուարութիւնները երեւում են ժողովածոյի առաջին իսկ տողերից. «Պատերազմի աւարտից 51 օր է անցել, էլի լոյս չունենք, իսկ եղանակը մեր ցաւն է երգում մինչեւ ուշ գիշեր։ Աշնան բերքը չհասցրեցինք հաւաքել, չնայած որ մայրս մի քանի ճաքած նուռ է արդէն դրել խոհանոցի դարակներից մէկում, եւ ամէն անգամ այդ դարակները բացելիս նռները փայլում են, ինչպէս հէքիաթի միջի արքայադստեր աչքերը»[1]։

Պատերազմից յետոյ իմաստազրկուել ու գունազրկուել է անգամ փոքրերի ու մեծերի կողմից սիրուած Ամանորը։ Հէքիաթի չար ոգիներից ու հերոսներից, թւում է, փախուստի ելք չկայ։

Երեք պատերազմների ականատես հօրաքոյրը զուգահեռներ է անցկացնում առաջին՝ 1988-1994 թթ. եւ 2020 թուականի պատերազմների միջեւ։ Առաջին պատերազմի ժամանակ՝ կրակահերթերի ու ռմբակոծութիւնների տարափի տակ, չէին դադարեցնում անգամ դասապրոցեսները... Այս անգամ ամէն ինչ անսպասելի ու աներեւակայելի էր, աւելի անմարդկային ու արագ։

Վովա Արզումանեանը մթութեան մէջ լսում է հօրաքրոջը, գիտակցութեան հոսքից մթագնում է սիրտը, մանկանալ է ուզում, որ չզգայ ու չհասկանայ շուրջը տիրող քաոսը։ Պատերազմից յետոյ գիշերներն աւելի երկար են, առաւօտները՝ տագնապներով ու անորոշութիւններով լի։ Ի՞նչ Ամանոր, երբ հայրենի քաղաքի (Ճարտարի մասին է խօսքը) կէսն անցել է թշնամու վերահսկողութեան տակ։ Ի՞նչ Ամանոր, երբ հազարա-

[1] **Վ. Արզումանեան**, Ճաքած պատերի լուսանցքից, Երեւան, 2022, էջ 3։

ւոր մարդկանց ամանորեայ հէքիաթը թշնամին խմբագրել է ընդմիշտ։

Անզէն աչքով երեւում են թշնամու դիրքերը, որոնցից այն կողմ օր-օրի ջնջւում են հայի հետքերը։ Բայց անգամ անելանելի թուացող իրավիճակում հայը չի կորցնում վերադարձի յոյսը։ Հազարաթեւ կարօտը կտրում-անցնում, խորտակում է բոլոր պատնէշները, հային հասցնում իր պապենական օջախ, ուր, թւում է, ոչինչ չի փոխուել։ «Մարդիկ հեռանում են, յիշողութիւններն ապրում են նրանցից առաջ եւ յետոյ»[2]։

Պատերազմից յետոյ առաջին Ամանորն է։ «Նստած մտածում եմ՝ Ամանորը չի՞ տեսնում, որ մարդիկ տխուր են, ինչո՞ւ է գալիս...»[3],- ընդհանրացնում է գրողը։

Ազգային արժեհամակարգի, մտածողութեան ու հոգատարութեան, աւանդական փոխյարաբերութիւնների հայելին է «Պապիս լռութիւնը»։ Արցախ աշխարհում պատերազմը ստուերի նման հետապնդում է արդէն մի քանի սերնդի։ Պատմուածքի մէջ աշխարհի ու մարդկանց մասին սերունդների պատկերացումները տարբեր են։ Նոյնն են ընկալումները պատերազմի եւ նրանից յետոյ մնացող մաշող տառապանքի, դատարկութեան ու կիսուածութեան զգացողութիւնները։ Պատերազմից առաջ գիւղի աստղազարդ երկինքը հոգեկան հանգստութիւն էր բերում պապին, պատերազմից յետոյ՝ անհանգստութիւն։ Պապի՝ ակօսուած դէմքի ամէն կնճիռ իր պատմութիւնն ունէր։ Թոռը պապի դէմքին հաշւում էր պատերազմի թողած աւերածութիւնները։ Ինչպէս Յովհ. Թումանեանի «Հին օրհնութիւն» բանաստեղծութեան մէջ են գիւղի ծերերն օրհնում երեխաներին՝ «Ապրէ՛ք, երեխե՛ք, / Բայց մեզ պէս չապրէք», այնպէս էլ աշխարհի չարն ու բարին տեսած գրողի պապն է մորմոքում. «... կեանք տեսած եմ, բալե՛ս, ապրածս կեանքից չեմ ուզում քեզ բաժին հասնի»[4]։

Մարդկային սրտի ամենանուրբ զգացմունքների ու ապրումների թարգմանն է Վովա Արզումանեանը։ Նրա աչքից չի վրիպում մարդկային տառապանքի եւ ոչ մի շերտ։ Գրողի հերոսներն իր հարազատ միջավայրի ծնունդ են՝ իրենց անմիջականութեամբ, մենութեան տուայտանքներով, մարդկային թուլութիւններով, ապրելու, պայքարելու յամառութեամբ։

Արդէն քանի տարի է կնոջ՝ Ռայայի քնքուշ շուրթերի փոխարէն Ազատի շուրթերը գիշերն է համբուրում («Շաբաթ, Կիրակի»)։ Կնոջից յետոյ Ազատի համար բոլոր օրերը նոյն օրուայ կրկնութիւնն են։ Մենութեան մէջ նրան ընկերակցում է գինին՝ օրեր, շաբաթներ, ամիսներ շարունակ։ Ազատի համար կեանքը կորցրել էր իր նախկին հմայքը։

Ազատին այցելող, յիշող չկար։ Սպասումը խելագարեցնելու չափ անտանելի էր։ Նրան թւում էր, թէ իր շուրջը քայլող, ապրող, կենդանի մարդկանց փոխարէն մեռելներ են շրջում՝ անհաղորդ իր ցաւին ու մենութեանը։

Մենութեան եւ երկուութեան ամենակուլ ալիքները կործանման ուղի են նախանշում նաեւ Յովսէփի համար («Կիսապտոյտ»)։ Աշխարհիկ կեանքի ճահիճը, «Հրեշտակների դրախտը» գիշերային ակումբի մեղքերով լի մթնոլորտը, կանացի քնքշանքներն ու գայթակղութիւնները նրա մէջ սպանում են աստուածաշնչեան պատուիրանները, նրան դատապարտում մենութեան, ծնում դեպրեսիւ իրավիճակներ, վախի անյաղթահարելի զգացողութիւն։

---

[2] Նոյն տեղում, էջ 5։

[3] Նոյն տեղում, էջ 7։

[4] Նոյն տեղում, էջ 10։

«Մամուլ», «Բերդաքաղաք», «Պատերազմը քո աչքերով» ստեղծագործութիւններ-ը յետ պատերազմական խորհրդածութիւններ են։ «Ոմանք կեանք են տալիս յանուն հայրենիքի, ոմանք էլ խիղճն են զոհում «յանուն» գրպանի»[5],- յետ պատերազմական քաոսի ամբողջական խճանկար է սա։ Կեանքը նման պահերին կիտրոնի նման թթու է դառնում եւ ծանրանում է կապարի նման։ Պատերազմը հեռանում է՝ մեզանից իւրաքանչիւրի բերանում իր դառնաղի համը թողնելով։

Արցախում ծնուած, մեծացած եւ այդ սրբազան հողի մէջ խոր արմատներ ձգած իւրաքանչիւր ոք համոզուած է, որ 2020 թուականը մի նոր վերջի սկիզբ է խորհրդանշում։ Այս հողից ուժ ու կենսունակութիւն, չյանձնուելու հաստատակամութիւն ու հոգեկան խաղաղութիւն է ստանում իւրաքանչիւր ոք։

Հեղինակը եւս հաւատացած է, որ Շուշի տանող ճանապարհները նորից, այս անգամ՝ մէկ ընդ միշտ կը բացուեն հայի առաջ։ Մնում է աղօթել ու փայփայել սպասումը։ Իսկ «խորտակուած նաւերի», «անտուն ստուերների», խեղուած ճակատագրերի, կորսուած հայրենիքի ու իրենց կեանքը հայրենիքի փրկութեան զոհասեղանին դրած հազարաւոր հայորդիների կորստեան համար պատասխան տուող չկայ. ցաւով արձանագրում է արձակագիրը։

«Պատերազմը ծերացել է մի տեսակ, բայց այնքան անգոյն է, որ միշտ մտքերիս հետ կռւում եմ՝ ծե՞ր է, թե՞ երիտասարդ։ Այնքա՜ն եմ ուզում՝ մեռնի պատերազմը, սիրելի՜ս... երեւի այն մեր սիրելի երազանքներից առաջինն է։ Պատկերացնո՞ւմ ես, որ նա մեռնի՝ ինչքան ենք տեսնելու գոյներ, որոնք դեռ չենք տեսել։ Որոնք դեռ չեն եղել...

Մենք փորձում ենք ապրել, բայց նրա աչքից ոչինչ չի վրիպում։ Մի քիչ երջանիկ... ու վերջ, նա գալիս է անկոչ հիւրի պէս՝ ծեծելով ոչ միայն մէկ դուռ, այլ՝ մի քանի հազար։ Եւ ամենաողբերգականը գիտե՞ս որն է... մենք դեռ գիտենք, թէ տարին չորս եղանակ ունի, բայց չենք հասկացել, որ տարուայ միակ եղանակը պատերազմն է՝ մեր մէջ ու մեզանից դուրս»[6]։

«Սիրախառն սուլոցներ» շարքի «Քո ամենատես հայեացքը», «Հոկտեմբերը լացում է», «Փոթորիկն անընդհատ վազում է», «Երկնային ճախրը», «Քարը գրկում է», «Աչքերիս մէջ», «Ուշ է», «Աւարտւում է մեր զրոյցը» բանաստեղծութիւնները սիրային ինքնատիպ երգեր են։ Արձակագիր Վովա Արզումանեանին լրացնելու եւ ամբողջական դարձնելու է շտապում բանաստեղծ Վովա Արզումանեանը։ Յաւերժական սիրոյ եւ կարօտների երգչի համար բոլոր ճանապարհները սկիզբ են առնում սիրելի էակի աչքերից, բոլոր թռիչքներն աւարտւում են այդ աչքերում.

«Երկնային ճախրը
աւարտւում է
աչքերիդ մէջ,
ու կամաց հանում եմ կոշիկներս՝
երկիր մտնելու համար»[7]։

Երկրային սիրուց վեր է բանաստեղծի գովերգած սէրը. երբեմն՝ եթերային, թեթեւ, ապրեցնող, երբեմն էլ՝ ուշացած, կիսատ.

---

[5] Նոյն տեղում, էջ 42։

[6] Նոյն տեղում, էջ 50։

[7] Նոյն տեղում, էջ 58։

«Աւարտւում է մեր զրոյցը
միայն նամակներով կիսատ։
Կը ճաքի թուղթը
մեր բառերից ճոխ,
ու ես կը հրաժարուեմ
հաւատալ, որ բառարաններից դուրս կարող ես
յօրինել ու յօրինուել,
յետոյ վազել մեքենայի հետեւից,
որն ամենաարագն է ընթանում՝
սովորականից արագ
ու իմ սիրուց դանդաղ
(թող կրիան չվիրաւորուի, ընկերներ են)»[8]։

«Արցախասէր» շարքում հայրենի Արցախն է՝ տղերքի արեամբ սրբագործուած փոքրիկ երկիրը, ուր դարից երկար ձգւում է օրը, ուր «սպասումը չի ծերանում», այլ դառնում է կենսակերպ։ Երկիր, ուր արիւնն ու արցունքը, թւում է, չեն չորանում.

«Էս ինչքան արնահոսեցիր,
Երկի՛ր,
քեզ ոնց փրկեմ, ասա,
ձեռքդ բռնեմ, երկի՛ր,
գամ քեզ հետ... տղերքիդ հետ։
Հողը լացում է ինձանից առաջ,
որ մի քիչ վերեւ նայեմ,
որտեղ իրենք են, որտեղ տղերքն են»[9]։

Հայրենի եզերքն ու մեզ անզուգական եւ անպարտելի դարձնողը մեր մայրերն են։ Նրանց շնչից ամենացուրտ, ամպոտ օրն անգամ ջերմանում է։ Բանաստեղծի մայրը նրան ճախրելու թեւեր է պարգեւում, տօն դարձնում իւրաքանչիւր օրը. «Անսովոր տօներն/ իրար յաջորդում են, /քո ներկայութեամբ/ մեծ տօն ես, /քո սրբասուրբ/ աչքերով/ ամէն մի օրս/ ապրելու/ առիթ է, մա՛մ։ /Ձեռքերդ դիր գլխիս,/ որ մտքերս/ առիթների/ պակաս չունենան»[10]։

«Կրակահերթեր» շարքում տրորուած արժանապատուութեամբ, անզօրութիւնից խեղճացած հայն է.

«Ես ամաչում եմ ապրելուս համար,
որ միայն թարմ ծաղիկ եմ բռնում
իմ ձեռքերի մէջ...
ու հողը... ու հայրենիքը,
ուր որ գնում ես՝ տապանաքար է»[11]։

Կեանք կոչուած «անտրամաբանական» երեւոյթի խորքերն է փորձում թափան-

[8] Նոյն տեղում, էջ 63:
[9] Նոյն տեղում, էջ 78:
[10] Նոյն տեղում, էջ 74:
[11] Նոյն տեղում, էջ 86:

ցել բանաստեղծը, գտնել վաղաժամ կորուստների ու հեռացումների պատճառները, շարունակել ապրել՝ աչքերը երկնքին յառած, ուր արեւադէմ տղերքն են անժամանակ հանգրուանել։

Արիւնոտ օրուայ ծալքերում Վովա Արզումանեանը փնտռում է մեր կորսուած ու կողոպտուած ինքնութիւնը։ Թւում է՝ մեզ համար սովորական է դարձել մեռնելով ապրելը.

«Երկիրը արիւնն է ծածկել, մամ,
մեր երկիրը ցաւից լուռ գոռում է,
չենք լսում, տեսնում ենք ու նորից շարունակում ապրել,
ապրել՝ ամէն անգամ մի քիչ մեռնելով...»[12]։

Հայրենիքը խաչում են, երկրի սերմը՝ գողանում։ Պատերազմն այս հողի վրայ չի աւարտւում։ «Խզբզած սլացք», «Երկիր» շարքերում բոլոր սէրերի կողքին, այդ սէրերից առաւել, նոյն գերագոյն սէրն է՝ Արցախասէրը։ Գոյութեան յոյսից ճառագում է լոյսը, որ ստիպում է ապրել ու հաւատալ։ Վերադարձի ստուերը երազներ է հիւսում ամէն մի հայի սրտում։

Վովա Արզումանեանի «Ճաքած պատերի լուսանցքից» գիրքը տառապանքի ծընունդ է։ Ճաքած պատերը մեր կոտորակուած հայրենիքի խորհուրդն ունեն, լուսանցքում հայն է՝ մեզանից իւրաքանչիւրը՝ ցաւը պատուով կրելու յամառութեամբ ու արժանապատուութեամբ։

«Քո գրկում հերքում եմ չլինելս
ու լինում կենդանի,
ինչպէս երբեք կամ միշտ։
Իմ կէս, չէ, իմ ամբողջութիւն...
Արցախս... բոնիր ձեռքս...»[13]։

ՆԱՆԱՐ ՍԻՄՈՆԵԱՆ
Բան. գիտ. թեկ., Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց համալսարանի դասախօս

[12] Նոյն տեղում, էջ 105։
[13] Նոյն տեղում, էջ 113։